

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱԿՈՔՅԱՆ ԳՈՀԱՐ ՄԵՆԱԿԻ

ԲԺՇԿԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և կրիմինալոգիա,
քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան-2018

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АКОПЯН ГОАР МЕХАКОВНА

УГОЛОВНО-ПРАВОВАЯ ЗАЩИТА МЕДИЦИНСКОЙ ТАЙНЫ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук
по специальности 12.00.05 – “Уголовное право и криминология;
уголовно-исполнительное право”

Ереван-2018

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական
համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների
դոկտոր, դոցենտ Ա.Ռ. Մարգարյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Ս.Ա. Դիրբանդյան
իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ Ա.Կ. Վարդապետյան
Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիր

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018 թվականի
դեկտեմբերի 21-ին՝ ժամը 14³⁰-ին, Երևանի պետական համալսարանում
գործող՝ ԲՈԿ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի
նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական
համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:
Սեղմագիրն առաքված է 2018թ. նոյեմբերի 10-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
իրավ. գիտությունների թեկնածու, դոցենտ

Ա.Ա. Մանասյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном
университете

Научный руководитель: доктор юридических
наук, доцент А.Р. Маргарян

Официальные оппоненты: доктор юридических наук,
профессор С.А. Дилбандян
кандидат юридических наук,
доцент А.К. Вардапетян

Ведущая организация: Образовательный комплекс Полиции РА

Защита состоится 21-ого декабря 2018 года в 14³⁰ часов на заседании
специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском
государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных
работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 10-ого ноября 2018 года.

Ученый секретарь специализированного
совета, кандидат юридических наук, доцент

А.А. Манасян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը ՀՀ օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով երաշխավորված հիմնարար իրավունքներից է, առանց որի դժվար է պատկերացնել սոցիալական էակի՝ մարդու բնականոն կենսագործունեությունը հասարակության մեջ: Անձնական կյանքի գաղտնիությունն առավել մեծ արժևորում է ձեռք բերել ժամանակակից աշխարհում, որտեղ տեղեկատվական տեխնոլոգիաների շեշտակի և հաճախ անվերահսկելի առաջընթացն ու լայն տարածումը զգալիորեն բարդացնում է յուրաքանչյուրի անձնական կյանքի գաղտնիության ապահովումը: Հետևաբար, պետությունը, համապատասխան իրավական արձագանք տալով ծագած մարտահրավերներին, պետք է առավել գործուն մեխանիզմներ նախատեսի անձնական կյանքի անձեռնմխելիության արդյունավետ իրավական պաշտպանության համար: Այդ նպատակով ձեռնարկված ամենակարևոր քայլերից մեկն անձնական կյանքի անձեռնմխելիության քրեաիրավական պաշտպանությունն է: Սակայն, գոյություն ունի անձնական կյանքի մի ոլորտ, որն առնչվում է մարդու ինքնության առավել զգայուն, ինտիմ, խոցելի կողմերին՝ ֆիզիկական և հոգեկան առողջությանը, որն ընդունված է անվանել բժշկական գաղտնիք: Վերջին տարիներին մարդու իրավունքների պաշտպանության կառուցակարգերի զարգացմամբ պայմանավորված՝ իրավական համակարգն ընդհանրապես և քրեական իրավունքը մասնավորապես ավելի մարդակենտրոն են դարձել: Քրեական օրենսգրքը պաշտպանության տակ է վերցրել մարդու մասնավոր կյանքին վերաբերող այնպիսի տեղեկություններ, որոնց գաղտնիության պահպանումը բխում է ոչ միայն և ոչ այնքան հասարակության կամ պետության շահերից, որքան առանձին անհատի: Դրանց շարքում են բժշկական գաղտնիք կազմող տեղեկությունները, որոնց հրապարակումը կարող է ոչ միայն խաթարել առողջապահության համակարգի նկատմամբ հանրային վստահությունը, այլև ծանր բարոյական վնաս պատճառել կոնկրետ անձանց: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ օրենսդիրը բժշկական գաղտնիքն օժտել է իրավական ամենաուժեղ պաշտպանությամբ՝ ներառելով այն քրեաիրավական պաշտպանության ենթակա տեղեկությունների ցանկում: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 145-րդ հոդվածը նախատեսում է պատասխանատվություն բժշկական գաղտնիքը հրապարակելու համար:

Այնուամենայնիվ, չնայած բժշկական պրակտիկայի համար դրա ունեցած կարևորագույն նշանակությանը՝ ժամանակակից աշխարհում ընդհանրապես և Հայաստանի Հանրապետությունում մասնավորապես, բժշկական գաղտնիքի պաշտպանությունը լուրջ մարտահրավերների առջև է կանգնել: Սա պայմանավորված է ինչպես տեղեկատվական տեխնոլոգիաների տա-

րածմամբ և բժշկական օգնության կազմակերպման նոր՝ գաղտնիության պահպանմանը չնպաստող կառուցակարգերի ներդրմամբ, այնպես էլ հիշյալ մարտահրավերներին արձագանքող գործուն իրավակարգավորումների բացակայությամբ: Այսպես, բժշկական գաղտնիքի պաշտպանության տեսանկյունից մտահոգիչ է անձնական տվյալների էլեկտրոնային շտեմարանների առկայությունը, որոնց անձեռնմխելիությունը ոչ միշտ է պատշաճ կերպով ապահովվում, ինչպես նաև մեկ պացիենտի սպասարկմանը նույն այցի ընթացքում բազմաթիվ մասնագետների ընդգրկումը (որոնցից որոշները կարող են բժշկական գաղտնիքը պահպանելու պարտականություն չունենալ, օրինակ՝ հոգեբանները կամ բժշկական սարքերը սպասարկող տեխնիկական ոլորտի մասնագետներ), առավել ևս՝ մեկ սենյակում միանգամից մի քանի պացիենտների սպասարկումը մի քանի բժիշկների կողմից, ինչը գաղտնիության պահպանման համար նոր մարտահրավերներ է ստեղծում: Ուստի, վերջերս թե՛ բժիշկների, թե՛ իրավաբանների շրջանում բժշկական գաղտնիքի պաշտպանության խնդիրը լուրջ քննարկումների առարկա է դարձել:

Բժշկական գաղտնիքի քրեաիրավական պաշտպանության վերաբերյալ հետազոտությունների անհրաժեշտությունը պայմանավորված է ոլորտում առկա մի շարք իրավական բացերով և գործնականում խնդիրներ առաջացնող իրավակարգավորումներով: Հայրենական օրենսդրությունը, մասնավորապես, չի հստակեցնում գաղտնիքի սահմանումը, իսկ քրեական օրենսգրքն արհեստականորեն սահմանափակում է բժշկական գաղտնիքի բնորոշումը: Բացի այդ, օրենսդրորեն պատշաճ հստակությամբ կարգավորված չեն բժշկական գաղտնիքը հրապարակելու իրավաչափության հիմքերը և պայմաններն այն դեպքերում, երբ գաղտնիքի իրավունքը կոլիզիայի մեջ է մտնում մրցակցող այլ շահերի հետ, ինչն էլ հաճախ հանգեցնում է անպատժելիության: Բացի այդ, թերի են կարգավորված բժիշկ, բժշկական հաստատություն-իրավապահ մարմիններ, պացիենտի հարազատներ հարաբերությունները բժշկական գաղտնիքի պահպանության բնագավառում, բժշկական գաղտնիքը հրապարակելու հանցակազմի սուբյեկտները, առարկան և մի շարք այլ հարցեր: Խնդիրն ավելի է խորանում մատնանշված հարցերի վերաբերյալ տեսական հետազոտությունների բացակայության պատճառով: Նման ոչ միանշանակ և թերի կարգավորումները ծնում են գործնական բազմաթիվ բարդություններ: Մասնավորապես, ըստ ՀՀ ոստիկանության և դատական դեպարտամենտի տրամադրած տվյալների, վերջին տասը տարիների ընթացքում քրեական օրենսգրքի 145-րդ հոդվածով որևէ քրեական գործ չի հարուցվել, ինչն արդյունք է քննարկվող բնագավառում իրավական անորոշության:

Վերոհիշյալ հանգամանքներով է պայմանավորված բժշկական գաղտնիքի իրավական, հատկապես՝ քրեաիրավական պաշտպանության բնագավառում խորը և համապարփակ հետազոտության անհրաժեշտությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը բժշկական գաղտնիքի քրեաիրավական պաշտպանության հետ կապված տեսական և գործնական հիմնախնդիրների համակողմանի ուսումնասիրությունն է և դրա հիման վրա օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկների ներկայացումը: Հետազոտության խնդիրներն են՝

- ձևակերպել բժշկական գաղտնիքի՝ որպես քննարկվող հանցագործության առարկայի սահմանումը և վեր հանել դրա բաղադրատարրերը:

- բացահայտել բժշկական գաղտնիքի բիոէթիկական հիմքերը՝ դրա քրեաիրավական պաշտպանության բնագավառում առավել նպատակային և արդյունավետ իրավակարգավորումներ առաջարկելու նպատակով:

- ուսումնասիրել բժշկական գաղտնիքի քրեաիրավական պաշտպանության ոլորտում միջազգային իրավական մոտեցումները, ինչպես նաև հիշյալ բնագավառում համեմատական վերլուծություն կատարել և դրա հիման վրա ներկայացնել քրեական օրենսգրքի և այլ վերաբերելի իրավական ակտերի կատարելագործմանն ուղղված առաջարկներ:

- համակողմանի վերլուծության ենթարկել բժշկական գաղտնիքը հրապարակելու հանցակազմի բոլոր տարրերը, ապօրինի հրապարակման համար քրեական պատասխանատվության առանձնահատկությունները և ներկայացնել հանցակազմի կատարելագործմանն ուղղված առաջարկներ:

- ուսումնասիրել բժշկական գաղտնիքի իրավաչափ հրապարակման հիմքերը և պայմանները, այդ թվում՝ իրավապահ մարմիններին տեղեկություններ փոխանցելու դեպքերում, և առաջարկություններ ներկայացնել:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը կազմում են բժշկական գաղտնիքի բնորոշման, դրա հրապարակման իրավաչափության ապահովման և ոչ իրավաչափ հրապարակման համար քրեական պատասխանատվության հետ կապված հարաբերությունները, քննարկվող բնագավառում տեսական և գործնական խնդիրները: Հետազոտության առարկան են բժշկական գաղտնիքի իրավական կարգավորմանը միտված քրեաիրավական և բլանկետային իրավադրույթները, մատնանշված բնագավառում միջազգային կարգավորումները, հատկապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները, ինչպես նաև միջազգային փորձը և դոկտրինալ աղբյուրները:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքը: Հայրենական մասնագիտական գրականության մեջ բժշկական գաղտնիքի քրեաիրավական պաշտպանության թեման մինչ օրս համակարգային վերլուծության չի ենթարկվել: Ոստի, աշխատանքում հիմնականում օգտագործվել են ռուս և եվրոպացի հեղինակների աշխատությունները: Հետազոտության տեսական հիմքը ձևավորվել է բժշկական գաղտնիքի իրավական պաշտպանությանը և դրա բիոէթիկական հիմքերին նվիրված արտասահմանյան աղբյուրներից: Թեման ուսումնասիրած հեղինակների շար-

քում կարելի է առանձնացնել Կ. Օ. Պապենային, Ս.Ն. Մերկուլովային, Ս.Մ. Պարշինին, Ս.Ի. Սուալովային, Ի.Վ. Սմոլկովային, Ս. Միկալովսկուն, Ջ. Հերրինգին, Ա.Հ. Ֆերգյուսոնին, Մ. Սիեզլերին, Ս. Թալբոտին, Ռ. Գոլդֆարբին և Ա.Ջ. Ուորվիկին:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքը: Հետազոտության իրավական հիմքը կազմել են բժշկական գաղտնիքի վերաբերյալ ներպետական օրենսդրությունը, արտասահմանյան մի շարք երկրների, այդ թվում՝ Գերմանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Շվեյցարիայի, Ավստրիայի քրեական օրենսգրքերը, միջազգային իրավական փաստաթղթերը և ՄԻԵԴ նախադեպերը: Հետազոտության փորձառական հիմքը կազմել են հեղինակի կողմից շուրջ 70 բժիշկների, օրդինատորների, բիոէթիկայի ոլորտի մասնագետների, պացիենտների հետ աշխատող սոցիալական աշխատողների և իրավաբանների շրջանում իրականացված փորձագիտական հարցման արդյունքները:

Հետազոտության գիտական նորույթը: Բժշկական գաղտնիքի իրավական պաշտպանությունն ընդհանրապես և քրեաիրավական պաշտպանությունը՝ հատկապես, հայրենական մասնագիտական գրականության մեջ պատշաճ ուշադրության չեն արժանացել: Սույն հետազոտությունը փորձ է առաջին անգամ համալիր և ընդգրկուն ուսումնասիրության ենթարկելու բժշկական գաղտնիքը՝ որպես իրավական ինստիտուտ՝ իր բոլոր բաղադրատարրերով, ինչպես նաև դրա ապօրինի հրապարակման համար քրեական պատասխանատվության առանձնահատկությունները: Առաջին անգամ տեսության մեջ համապարփակ վերլուծության են ենթարկվել և ամփոփվել բժշկական գաղտնիքը հրապարակելու հիմքերը, հրապարակման հիմքերը տարանջատվել են պայմաններից, ինչպես նաև առաջարկվել են հրապարակումն իրավաչափ համարելու չափանիշները: Հիշյալ ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում կատարվել են տեսական եզրահանգումներ և օրենսդրության և պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջարկներ՝ հիմնված նաև ՄԻԵԴ նախադեպային իրավունքի և միջազգային լավագույն փորձի վրա: Ատենախոսության գիտական նորույթը դրսևորվում է նաև պաշտպանության ներկայացվող դրույթներում և օրենսդրության կատարելագործմանը վերաբերող առաջարկներում:

Աշխատանքի գիտական նորույթն արտահայտվում է նաև **պաշտպանության ներկայացվող հետևյալ դրույթներում՝**

1. Գործող օրենսդրությունը հստակ չի կարգավորում բժշկական գաղտնիքի հասկացության, այն պահպանելու պարտականություն կրող սուբյեկտների, դրա հրապարակման իրավաչափության հիմքերի և պայմանների հետ կապված հարցերը: Նշված հարցերին համընդգրկուն իրավակարգավորումներ տալու համար անհրաժեշտ է ընդունել առանձին օրենք: Առաջարկվում է օրենքում ներառել բժշկական գաղտնիքի հետևյալ սահմանումը:

«Բժշկական գաղտնիքը պացիենտի՝ բժշկական օգնության կամ սպասարկման դիմելու փաստի, նրա առողջական վիճակի, հետազոտման, ակտորոշման, մահվանից հետո իր օրգանները և (կամ) հյուսվածքները վերցնելու վերաբերյալ համաձայնության և նրա վերաբերյալ այլ անձնական տեղեկությունների ամբողջություն է, որոնք բժշկական օգնություն կամ սպասարկում իրականացնող անձին հայտնի են դարձել պացիենտին բժշկական օգնություն կամ սպասարկում տրամադրելու կապակցությամբ, և որոնց գաղտնիությունը պետք է պահպանվի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան»:

2. Քրեական օրենսգրքում բժշկական գաղտնիքի բովանդակությունն արհեստականորեն նեղ է բացահայտված: Բժշկական գաղտնիքն ընդգրկում է բժշկական օգնություն և (կամ) սպասարկում տրամադրելու կապակցությամբ ստացված ինչպես առողջապահական նշանակություն ունեցող, այնպես էլ նման նշանակություն չունեցող անձնական բնույթի տեղեկությունները (սեռական կողմնորոշում, դավանանք, նախասիրություններ, ֆիզիկական արատներ, անձի մոտ առկա շեղումներ և կախվածություններ, որոնք ֆիզիկական կամ հոգեկան հիվանդություն չեն համարվում, և այլ անձնական տեղեկություններ): Ուստի, նպատակահարմար է, որ քրեական օրենսգրքը գերծմնա ոչ քրեաիրավական եզրույթի՝ բժշկական գաղտնիքի բովանդակությունը բացահայտելուց, այն էլ նման նեղ մեկնաբանությամբ, այլ պարզապես վկայակոչի «բժշկական գաղտնիք» եզրույթը, որի բովանդակությունն արդեն իսկ բացահայտված կլինի առանձին օրենքով:

3. Քրեական օրենսգրքի հոդվածը 145-ը որպես բժշկական գաղտնիքի իրավաչափ հրապարակման պայման առաջ է քաշում «մասնագիտական կամ ծառայողական անհրաժեշտություն» եզրույթը, որը խիստ խնդրահարույց է և մի շարք տարընթերցումների տեղիք է տալիս ինչպես տեսական, այնպես էլ գործնական հարթություններում: Բացի այդ, կարևոր է, որպեսզի օրենսդրորեն ամրագրված լինեն գաղտնիքի իրավաչափ հրապարակման թե՛ հիմքերը, և թե՛ պայմանները: Ուստի, առաջարկվում է նշված եզրույթը փոխարինել այնպիսի ձևակերպմամբ, որը կընդգրկի ինչպես գաղտնիքը հրապարակելու իրավաչափության հիմքերին, այնպես էլ պայմաններին չհամապատասխանելը: Գաղտնիքը հրապարակելու պայմանների շարքում կենտրոնական տեղը պետք է զբաղեցնի անհրաժեշտությունը, որը կարող է գնահատվել հետևյալ չափորոշիչներով՝ ա) այն նպատակը, որի համար գաղտնիքը հրապարակվում է, պետք է գերակայի գաղտնիքը պահպանելու շահի նկատմամբ, բ) այդ նպատակին հասնելը պետք է հնարավոր չլինի առանց գաղտնիքը հրապարակելու, գ) հրապարակումը պետք է լինի միայն անհրաժեշտ չափով. ոչ օրինաչափ պետք է համարել տեղեկությունների այն մասի հրապարակումը, որն անհրաժեշտ չէ նախապատվելի նպատակին հասնելու համար:

4. Հանցակազմի սուբյեկտի հետ կապված՝ քրեական օրենսդրությանը ոչ հարիր տարընկալումները վերացնելու, բժշկական գաղտնիքն ապօրինի հրապարակելու և ապօրինի մշակելու այլ եղանակների համար արդարացի պատասխանատվություն նախատեսելու, ինչպես նաև մասնագիտական, ծառայողական և աշխատանքային գաղտնիքի պատշաճ քրեաիրավական պաշտպանությունն ապահովելու նպատակով առաջարկվում է 145-րդ հոդվածի փոխարեն օրենսգրքը լրացնել համապարփակ նոր հանցակազմով, որը կքրեականացնի մասնագիտական, ծառայողական կամ աշխատանքային գաղտնիք կազմող տեղեկություններն ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը կամ հրապարակելը, որոնք անձին հայտնի են դարձել իր ներկա կամ նախկին մասնագիտական, ծառայողական, աշխատանքային պարտականությունների կամ ժամանակավոր գործառույթների իրականացման կապակցությամբ:

5. Անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել, որ պացիենտի՝ բժշկական գաղտնիքի պահպանման իրավունքը, հետևաբար նաև բժշկական գաղտնիքը հրապարակելու իրավաչափության պայմանները, գործում են նաև նրա մահից կամ հանցակազմի սուբյեկտի՝ թոշակի անցնելուց կամ հատուկ սուբյեկտի կարգավիճակը կորցնելուց հետո:

6. Գործնականում բժշկական հաստատությունները և բժշկական անձնակազմը պացիենտի վերաբերյալ տեղեկությունները հաղորդում են նրա ցանկացած ազգականի, մերձավորի կամ ծանոթի՝ առանց նրա կամքը հաշվի առնելու՝ հատկապես, երբ նա անգիտակից է և չի կարող իր կամքն արտահայտել: Այս հարցում պացիենտի ինքնավարության, մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքների պատշաճ պաշտպանության համար անհրաժեշտ է ներդնել այնպիսի համակարգ, որը թույլ կտա յուրաքանչյուր չափահաս և գործունակ անձի ընտրել, թե իր վերաբերյալ տեղեկությունները իր մահից հետո կամ անգիտակից վիճակում հայտնվելիս ում պետք է հասանելի լինեն՝ անկախ ազգակցական կապից: Իսկ պացիենտից համաձայնություն ստանալու անհնարինության պարագայում բժշկական գաղտնիքը հրապարակելու իրավաչափությունը պետք է որոշվի ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտի շրջանակում: Այս համատեքստում բժշկական գաղտնիքի արդյունավետ պաշտպանության նպատակով արդարացված է թվում նախատեսել նաև այնպիսի կարգավորում, որի համաձայն բոլոր այն դեպքերում, երբ պացիենտն ի վիճակի է այդ տեղեկատվությունը հասկանալ, նրան բժշկական օգնություն կամ սպասարկում տրամադրելուց առաջ պետք է տեղեկացնել բժշկական գաղտնիքի սահմանների մասին, ինչը նրա համար կանխատեսելի կդարձնի իր ընտրության իրավական հետևանքները:

7. Բժշկական հաստատություններում տարածված արատավոր պրակտիկա է պացիենտների վերաբերյալ առանց նրանց համաձայնության սեփական նախաձեռնությամբ իրավապահ մարմիններին տեղեկություններ հայտ-

ներ՝ վերջիններիս կողմից համապատասխան հարցման բացակայության պայմաններում: Քանի դեռ բժշկական գաղտնիքը հրապարակելու նման տարածված պրակտիկան օրենքով սահմանված հիմք չունի, այն հակասահմանադրական է: Ուստի, անհրաժեշտ է օրենքով հստակ կանոնակարգել իրավապահ մարմիններին բժիշկների և բժշկական հաստատությունների կողմից պացիենտների վերաբերյալ տեղեկություններ հաղորդելու հիմքերը և պայմանները: Առաջարկվում է բժշկական հաստատությունների համար առանց պացիենտի համաձայնության հաղորդում ներկայացնելու պարտականություն սահմանել միայն հանրային մեղադրանքի՝ առողջությանը միջին ծանրության և ծանր վնաս, ինչպես նաև բռնությամբ մահ պատճառելու գործերով՝ օրենքով սահմանված բացառություններով: Բացի այդ, արդարացված է թվում այնպիսի կարգավորումը, որի համաձայն ոչ մեծ և միջին ծանրության հանցագործություններով հարուցված քրեական գործերով բժիշկները չեն կարող հրավիրվել և հարցաքննվել որպես վկա՝ բժշկական օգնության և (կամ) սպասարկման կապակցությամբ իրենց հայտնի դարձած բժշկական գաղտնիք կազմող տեղեկությունների վերաբերյալ, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության նշանակությունը նախ և առաջ այն է, որ առաջին անգամ հայրենական քրեական իրավունքում համակողմանի վերլուծության են ենթարկվել բժշկական գաղտնիքի քրեաիրավական պաշտպանության հետ կապված տեսական և գործնական հիմնահարցերը և դրանց լուծմանն ուղղված միջոցները: Ատենախոսության մեջ արված վերլուծությունների արդյունքները կարող են օգտագործվել հետագա գիտական հետազոտություններում, ինչպես նաև քրեական իրավունքի և բժշկական էթիկայի դասընթացների համապատասխան բաժիններում: Հիմնախնդրի առնչությամբ կատարված ուսումնասիրությունները, ներկայացված առաջարկները և դրանց հիմնավորումները կարող են օգտագործվել նաև օրենսդրական բարեփոխումների, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայի կատարելագործման նպատակով:

Հետազոտության արդյունքների ներդրումն ու փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնում: Հետազոտության արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել գիտական պարբերականներում և գիտական ժողովածուներում: Ատենախոսության մի շարք դրույթներ առենախոսի կողմից ներկայացվել են գիտաժողովների և ամբիոնում ներկայացված գիտական հաղորդումների շրջանակներում: Ի հավելումն, առենախոսության մի շարք դրույթներ քննարկվել են առողջապահական քաղաքականության մշակման ոլորտի փորձագետների, բժշկական օգնություն և (կամ) սպասարկում իրականացնող անձանց, բիոէթիկայի մասնագետների հետ:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսական սույն աշխատության կառուցվածքը պայմանավորված է դրա շրջանակներում իրականացված հետազոտության նպատակներով և խնդիրներով: Այն պատրաստված և ձևավորված է ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին համապատասխան և բաղկացած է ներածությունից, երկու գլխից, որոնք ներառում են յոթ պարագրաֆ, եզրակացությունից, օգտագործված գրականության ու իրավական ակտերի ցանկից և հավելվածից:

Ատենախոսության համառոտ բովանդակությունը:
Ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում են թեմայի մշակվածության աստիճանը, հետազոտության տեսական, նորմատիվ, փորձառնական հիմքերը, մեթոդաբանությունը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, ձևակերպվում են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը և հետազոտության արդյունքների փորձարկումը:

Առաջին գլուխը՝ «Բժշկական գաղտնիքը որպես սոցիալ-իրավական կատեգորիա» վերտառությամբ, բաղկացած է չորս պարագրաֆից:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում՝ «Բժշկական գաղտնիքի տեղը օրենքով պաշտպանվող գաղտնիքների համակարգում» վերտառությամբ, հեղինակը բժշկական գաղտնիքի հատկանիշները, տարրերը, տեսակը և իրավական պաշտպանության առանձնահատկությունները համակողմանի և խորը վերլուծության ենթարկելու նպատակով ուսումնասիրում է օրենքով պաշտպանվող գաղտնիքի հասկացությունը, հատկանիշները, դասակարգումը և պարզաբանում բժշկական գաղտնիքի տեսակը: Մասնավորապես, գաղտնիքի սահմանմանն անդրադառնալիս հեղինակն ընդգծում է, որ անհրաժեշտ է չնույնացնել «գաղտնիք» և «կոնֆիդենցիալ տեղեկություն» եզրույթները, տեղեկությունների գաղտնիության խախտմամբ սեփականատիրոջը կամ այլ անձանց պատենցիալ վնասի պատճառումը չի կարելի նշել որպես գաղտնիքի պարտադիր հատկանիշ, իսկ տեղեկությունների գաղտնիության պահպանման նպատակի ընդգծումն, ընդհակառակը, արդարացված է: Որպես գաղտնիքների դասակարգման չափանիշ առաջարկվում է դրանք պահպանելու պարտականություն ունեցող սուբյեկտների կարգավիճակը: Այս չափանիշով առաջնորդվելով՝ հետևություն է արվում, որ, ի հակառակ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով որդեգրված մոտեցման, բժշկական գաղտնիքը չի կարելի համարել զուտ մասնագիտական գաղտնիք, այն համակարգային գաղտնիք է և ըստ կոնկրետ սուբյեկտի կարգավիճակի՝ կարող է լինել մասնագիտական, ծառայողական կամ ձեռնմխելի:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Բժշկական գաղտնիքի իրավական պաշտպանության էթիկական հիմքերը և ժամանակակից մարտահ-

րավերները» վերտառությամբ, հեղինակը բժշկական գաղտնիքի հետ կապված բազմաթիվ բարոյա-էթիկական երկընտրանքներին իրավական հստակ կարգավորումներ առաջարկելու նպատակով վերլուծում է բժշկական գաղտնիքի պաշտպանության էթիկական նկատառումները, դրանք ամփոփող երկու դոկտրինները՝ ուտիրալիստական և դեոնտոլոգիական, գաղտնիքի պաշտպանության նպատակները և ժամանակակից մարտահրավերները: Հեղինակը եզրահանգում է, որ բժշկական գաղտնիքի իրավական պաշտպանությունը ծառայում է երկու նպատակի՝ անձնական կյանքի անձեռնմխելիության և ինքնավարության իրավունքների ապահովումը, ինչն ամրացնում է վստահությունը բժշկի և պացիենտի հարաբերություններում՝ հնարավոր դարձնելով արդյունավետ բժշկական օգնությունը և սպասարկումը, և առողջապահական համակարգի կայունության և հասարակության առողջության պահպանությունը, ինչին նպաստում է բժշկական օգնության դիմելուց խուսափելու հավանականության նվազեցումը հատկապես վարակիչ հիվանդությունների պարագայում:

Առաջին գլխի երրորդ պարագրաֆում՝ «Բժշկական գաղտնիքի իրավական բնույթն ու էությունը» վերտառությամբ, ներկայացվում է բժշկական գաղտնիքի իրավական պաշտպանության վերաբերյալ հակիրճ պատմական ակնարկ և մանրամասն քննարկվում են բժշկական գաղտնիքի տարրերը: Հեղինակն առաջարկում է որպես բժշկական գաղտնիքի տարրեր դիտարկել գաղտնիքի բովանդակությունը, դրա սուբյեկտը, գաղտնիքը պահպանելու պարտականություն կրող սուբյեկտը, այն պահպանելու պարտականությունը և այդ պարտականության խախտման համար իրավական պատասխանատվությունը, և արդյունքում առաջարկում է բժշկական գաղտնիքի սահմանում:

Գաղտնիքի բովանդակությանն անդրադառնալիս ընդգծվում է, որ բժշկական գաղտնիքի պաշտպանությունը տարածվում է ինչպես բժշկի կողմից բուժական միջոցառումների ընթացքում պարզված, այնպես էլ ուղղակիորեն պացիենտի կողմից կամավոր կերպով հաղորդված տեղեկությունների վրա՝ անկախ դրանց ձեռքբերման աղբյուրից: Ընդ որում, բժշկական գաղտնիքի բովանդակությունն են կազմում ինչպես բժշկական նշանակություն ունեցող, այնպես էլ նման նշանակություն չունեցող բժշկական օգնության կամ սպասարկման կապակցությամբ հայտնի դարձած անձնական բնույթի տեղեկությունները՝ անկախ բնույթից: Շեշտվում է, որ նույնիսկ մամուլում հրապարակումները բժշկին չեն ազատում պացիենտի մասին տեղեկությունները չհրապարակելու պարտականությունից: Բժշկական գաղտնիքի բովանդակությունը քննարկելիս հեղինակն ի վերջո առաջարկում է փոխել գործող քրեական օրենսգրքում դրան տրված բնորոշումը, որը չի համապատասխանում բժշկական գաղտնիքի պաշտպանության նպատակներին և միջազգային իրավական չափանիշներին:

Քննարկման առարկա է դառնում նաև այն հարցը, թե արդյոք կախված

բժշկական գաղտնիքի սուբյեկտից՝ դրա պաշտպանության սահմանները կարող են տարբերվել: Հետևություն է արվում, որ օրինակ բարձրագույն պաշտոնատար անձանց պարագայում, ում «անձնական կյանքի անձեռնմխելիության ողջամիտ ակնկալիքը» որոշակիորեն ավելի ցածր է, քան հասարակության մյուս անդամներինը, նման տարբերակում հնարավոր է:

Վերջում շեշտվում է հայրենական օրենսդրության մեջ իրավական ամրագրում չստացած, սակայն միջազգայնորեն ընդունված այն կարևոր սկզբունքը, որ բժշկական գաղտնիքը պահպանելու պարտականությունն անժամկետ է և չի դադարում պացիենտի մահվան կամ բուժաշխատողի՝ թոշակի կամ այլ աշխատանքի անցնելու դեպքերում:

Բժշկական գաղտնիքը պահպանելու պարտականության կանոնից բացառությունները և այդ պարտականությունը խախտելու համար քրեաիրավական պատասխանատվության առանձնահատկությունները քննարկվում են աշխատանքի երկրորդ գլխում:

Առաջին գլխի չորրորդ պարագրաֆում՝ «Բժշկական գաղտնիքի պաշտպանությունը միջազգային իրավունքում» վերտառությամբ, հեղինակը վերլուծում է բժշկական գաղտնիքի պաշտպանությանն առնչվող միջազգային իրավական փաստաթղթերը և դրանց հիման վրա ձևավորված նախադեպային իրավունքը՝ հատուկ ուշադրություն հատկացնելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանությանը: Անդրադարձ է կատարվել այն նախադեպերին, որոնք վերաբերում են բժշկական գաղտնիքը հրապարակելու իրավաչափության պայմաններին, համաչափության գնահատման կանոններին և դատավարական ընթացակարգերին: Բացի այդ, հեղինակի կողմից կարևորվում է, որ Դատարանն իր իրավաբանությունում ուժեղացրել է ժամանակակից էթիկական միտումը, որ բժշկական գաղտնիքի հայեցակարգը ենթադրում է ոչ միայն տեղեկությունը չհրապարակելու բացասական պարտականություն, այլև դրական պարտականություն՝ ապահովելու համապատասխան տեղեկությունների գաղտնիությունը:

Ուսումնասիրված իրավական դիրքորոշումներն ընկած են օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկների հիմքում:

Երկրորդ գլուխը՝ «Բժշկական գաղտնիքը՝ որպես քրեաիրավական ոտնձգության առարկա» վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆից:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Բժշկական գաղտնիքի դեմ ոտնձգության համար քրեական պատասխանատվության հիմնախնդիրները» վերտառությամբ, հեղինակը վերլուծում է բժշկական գաղտնիքը հրապարակելու հանցակազմի հատկանիշները՝ օբյեկտը, օբյեկտիվ կողմը, սուբյեկտը և սուբյեկտիվ կողմը, ինչպես նաև շոշափում բժշկական գաղտնիքը հրապարակելու հետ կապված արարքների որակման հարցերը առանձին խնդրահարույց իրավիճակներում: Մասնավորապես, քննարկելով ըստ ա-

ռարկայի որակյալ հանցակազմ նախատեսելու նպատակահարմարության հարցը, հեղինակն արդարացված է համարում ՄԻԱՎ/ՁԻԱՀ դրական կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունը հրապարակելը որպես հանցակազմը ծանրացնող հանգամանք նախատեսելը: Անդրադառնալով այն հարցին, թե արդյոք հրապարակում է համարվում տեղեկությունը երրորդ անձանց հայտնի դարձնելը միայն այն դեպքում, երբ բացահայտվել է պացիենտի ինքնությունը, թե՛ նաև այն պարագայում, երբ նրա ինքնությունը չի բացահայտվել, հեղինակը հանգում է հետևության, որ խնդրո առարկա հանցակազմի իմաստով հրապարակում է համարվում տեղեկության այնպիսի բացահայտումը, որը թույլ է տալիս ուղղակիորեն կամ անուղղակիորեն նույնականացնել պացիենտին:

Քննարկելով հանցակազմի օբյեկտիվ կողմը տեղեկությունները հրապարակելուց բացի նաև անձնական տվյալների ապօրինի մշակման այլ եղանակներով լրացնելու անհրաժեշտությունը՝ հեղինակը եզրահանգում է, անհրաժեշտ է քրեական օրենսգիրքը լրացնել առանձին հանցակազմով, որը պատասխանատվություն կնախատեսի գաղտնիք համարվող տեղեկությունները հատուկ սուբյեկտի կողմից ապօրինի հավաքելու, պահելու, օգտագործելու կամ հրապարակելու համար:

Այնուհետև, հեղինակն անդրադառնում է խնդրո առարկա արարքի համար քրեական հետապնդման կարգի հարցին և առաջարկում, որ այն նախատեսվի մասնավոր մեղադրանքի կարգով հետապնդման ենթակա հանցագործությունների շարքում:

Անդրադառնալով հանցակազմի սուբյեկտին, հեղինակը վեր է հանում սուբյեկտային կազմի որոշման հետ կապված մի շարք անորոշությունները և օրենսդրական կարգավորման բացերը: Ընդգծվում է, որ տարընթերցումների պատճառով քրեական պատասխանատվության տիրույթից դուրս է մնում կամ անարդարացի մեղմ պատասխանատվության է ենթարկվում անձանց բավականին լայն շրջանակ, որոնք բժշկական գաղտնիք կազմող տեղեկություններին ծանոթանում են իրենց ծառայողական կամ աշխատանքային կամ ժամանակավոր պարտականությունների կատարման կապակցությամբ, ուստի անարդարացի է նրանց ընդհանուր սուբյեկտի կարգավիճակով պատասխանատվության ենթարկելը: Վերլուծելով առկա իրավիճակը՝ հեղինակը եզրակացնում է, որ բժշկական գաղտնիքի ապօրինի հրապարակման բոլոր դեպքերի համար արդարացի պատասխանատվություն նախատեսելու, ինչպես նաև մասնագիտական, ծառայողական կամ աշխատանքային գաղտնիքի պատշաճ քրեաիրավական պաշտպանություն ապահովելու նպատակով անհրաժեշտ է օրենսգիրքը լրացնել համապարփակ առանձին հանցակազմով, որը կքրեականացնի մասնագիտական, ծառայողական, աշխատանքային գաղտնիքն ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը կամ հրապարակելը, որն անձին հայտնի է դարձել իր ներկա կամ նախկին մասնագիտա-

կան, ծառայողական, աշխատանքային պարտականությունների կամ ժամանակավոր գործառույթների իրականացման կապակցությամբ: Նման մոտեցման նպատակահարմարությունը հիմնավորելու նպատակով հեղինակը ներկայացնում է արտասահմանյան երկրների վերաբերելի փորձը:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Բժշկական գաղտնիքի հրապարակման իրավաչափության հիմքերը եվ պայմանները» վերտառությամբ, բազմակողմանի քննարկման է ենթարկվում խնդրո առարկա հանցակազմում որպես բժշկական գաղտնիքի օրինաչափ հրապարակման հիմք նշված «առանց մասնագիտական կամ ծառայողական անհրաժեշտության» եզրույթին, փորձ է արվում բացահայտել դրա նշանակությունը, ինչպես նաև վեր են հանվում այդ եզրույթի հետ կապված տեսական և գործնական հիմնախնդիրները: Հեղինակը քննարկում է ծայրահեղ անհրաժեշտության իրավաչափության պայմանների կիրառումը բժշկական գաղտնիքը հրապարակելու համատեքստում անհրաժեշտությունը գնահատելու տեսանկյունից և եզրակացնում, որ դրանք կիրառելի են որոշ իրավիճակներում (հանցանքի կատարման, ՄԻԱՎ-ով վարակվելու սպառնալիքի կամ գենետիկ հիվանդության կանխարգելման) բժշկական գաղտնիքը հրապարակելու օրինաչափությունը գնահատելիս: Այնուամենայնիվ, հեղինակը հիմնավորում է, որ անհրաժեշտ է օրենսդրորեն հստակեցնել բժշկական գաղտնիքը հրապարակելու օրինաչափության հիմքերը և պայմանները: Մասնավորապես, առաջ են քաշվում և քննարկվում այն հիմքերը, որոնց առկայությամբ բժշկական գաղտնիքի հրապարակումն արդարացված կարող է լինել, ինչպես նաև ընդգծվում այն պայմանները, որոնց խախտման պարագայում անգամ օրինաչափ հիմքերի առկայությամբ հրապարակումը կկրի հանցավոր բնույթ: Այնուհետև, հեղինակն անդրադառնում է այնպիսի համակարգ ներդնելու հարցին, որը թույլ կտա յուրաքանչյուր չափահաս և գործունակ անձի ընտրել, թե իր վերաբերյալ տեղեկությունները իր մահից հետո կամ անգիտակից վիճակում հայտնվելիս ում պետք է հասանելի լինեն՝ անկախ ազգակցական կապից: Վերջում հեղինակը շեշտադրում է, որ բժշկական գաղտնիքի հրապարակումն օրինաչափ լինելու համար ամեն դեպքում պետք է լինի անհրաժեշտ, և շոշափում է անհրաժեշտության գնահատման չափանիշները:

Երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Բժշկական գաղտնիքի հրապարակման իրավաչափության պայմանները հանցագործության բացահայտման նպատակով տեղեկություններ տրամադրելու դեպքերում» վերտառությամբ, հեղինակը քննարկում է, թե ո՞ր պայմաններում են բուժհաստատությունը կամ բժիշկը պարտավոր իրավապահ մարմիններին սեփական նախաձեռնությամբ տրամադրել բժշկական գաղտնիք կազմող տեղեկություններ, կոնկրետ ո՞ր տեղեկություններն են ենթակա հրապարակման իրավապահ մարմինների կողմից հարցման պարագայում, արդյո՞ք գործող օրենսդրությունը տրամադրում է քրեական գործի շրջանակում բժշկի հար-

ցաքննության անհրաժեշտ և բավարար երաշխիքներ, և հետևաբար անհրաժեշտ է բժշկին օժտել որպես վկա հարցաքննվելու անձեռնմխելիությամբ, ինչ փոփոխություններ է անհրաժեշտ կատարել՝ բժշկական գաղտնիք կազմող տեղեկություններ պարունակող փաստաթղթերի առգրավման կարգը բարելավելու նպատակով և վերջապես ինչ փոփոխություններ է անհրաժեշտ կատարել համապատասխան իրավական ակտերում՝ հանցագործության կապակցությամբ բժշկական գաղտնիքը հրապարակելու իրավաչափությունն ապահովելու նպատակով: Բարձրացված հարցերի քննարկման արդյունքում հեղինակը հանգում է հետևության, որ, չնայած տարածված պրակտիկային, գործող օրենսդրության պայմաններում բժշկական անձնակազմը չի կրում պարտականություն սեփական նախաձեռնությամբ իրավապահ մարմիններին տեղեկություններ տրամադրելու պացիենտի և նրա առողջական վիճակի վերաբերյալ՝ առանց նրա համաձայնության: Հետևաբար, անհրաժեշտ է օրենքով ամրագրել առանց իրավապահ մարմինների կողմից հարցման բժիշկների կամ առողջապահական հաստատությունների կողմից նրանց բժշկական գաղտնիք կազմող տեղեկություններ տրամադրելու հստակ հիմքերը և կարգը: Բացի այդ, այլ բարեփոխումներ նույնպես անհրաժեշտ է կատարել քրեական դատավարության օրենսգրքում բժշկական գաղտնիքի պատշաճ պաշտպանությունն ապահովելու համար՝ այդ թվում բժշկական փաստաթղթերի առգրավման, հետազոտության, բժշկի հարցաքննության կարգի համատեքստում:

Ատենախոսության եզրակացություններում, ի լրումն պաշտպանության ներկայացվող դրույթների, կատարվել են հետևյալ հիմնական եզրահանգումներն ու առաջարկությունները՝

1. Գաղտնիքի արդյունավետ իրավական պաշտպանության ուղղությամբ առաջին քայլը կարող է լինել գաղտնիքի օրենսդրական սահմանումը, որը պետք է ընդգրկի գաղտնիքի բոլոր այն հատկանիշները, որոնք ընդհանուր են դրա բոլոր տեսակների համար: Բացի այդ, գաղտնիքի սահմանման մեջ կարևոր է թվում արտահայտել նաև հետևյալ հատկանիշները՝

ա) անհրաժեշտ է չնույնացնել «գաղտնիք» և «կոնֆիդենցիալ տեղեկություն» եզրույթները.

բ) տեղեկությունների կոնֆիդենցիալության խախտմամբ սեփականատիրոջը կամ այլ անձանց պոտենցիալ վնասի պատճառման մասին նշումը գաղտնիքի սահմանման մեջ թվում է ավելորդ.

գ) նպատակահարմար է ընդգծել այն գաղափարը, որ գաղտնիքի դեմ կարելի է ոտնձգել ոչ միայն այն հրապարակելու միջոցով.

դ) կարևոր է նաև գաղտնիքի սահմանման մեջ համապատասխան տեղեկությունների գաղտնիության պահպանման նպատակի ընդգծումը.

Ոստի, առաջարկվում է գաղտնիքի հետևյալ սահմանումը. «գաղտնիք են կազմում այն տեղեկությունները (տվյալները), որոնց հասանելիությունը սահմանափակված է օրենսդրությամբ՝ ֆիզիկական, իրավաբանական անձանց իրավունքների և օրինական շահերի, հասարակության և պետության օրինական շահերի պաշտպանության նկատառումներով»:

2. Անհրաժեշտ է վերախմբագրել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը այն հաշվով, որպեսզի գաղտնիքների դասակարգումը հիմնված լինի որևէ հստակ չափանիշի վրա, իսկ բժշկական գաղտնիքը չներկայացվի որպես բացառապես մասնագիտական գաղտնիք: Գաղտնիքների դասակարգման համար նպատակահարմար է թվում առաջնորդվել այն պահպանելու պարտականություն ունեցող սուբյեկտների կարգավիճակի չափանիշով:

3. Բժշկական գաղտնիքի հրապարակման իրավաչափությանը վերաբերող իրավակարգավորումները պետք է հաշվի առնեն բժշկական գաղտնիքի էթիկական հիմքերը և բխեն դրա իրավական պաշտպանության նպատակներից, որոնք են՝ ապահովել հարգանքը մարդու անձնական կյանքի նկատմամբ, ամրացնել վստահությունը բժշկի և պացիենտի հարաբերություններում՝ հնարավոր դարձնելով արդյունավետ բժշկական օգնությունը և սպասարկումը, ինչպես նաև վարակների կանխումն ու առողջապահական համակարգի կայունությունն ապահովելը:

4. Բժշկական գաղտնիքը պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ բաղադրատարրերի՝ գաղտնիքի բովանդակությունը, դրա սուբյեկտը, գաղտնիքը պահպանելու պարտականություն կրող սուբյեկտը, այն պահպանելու պարտականությունը և համապատասխանաբար՝ այդ պարտականության խախտման համար պատասխանատվությունը:

5. Կախված բժշկական գաղտնիքի սուբյեկտից՝ դրա պաշտպանության սահմանները կարող են տարբերվել: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է բարձրագույն պաշտոնատար անձանց, ում «անձնական կյանքի անձեռնմխելիության ողջամիտ ակնկալիքը» որոշակիորեն ավելի ցածր է, քան հասարակության մյուս անդամներինը:

6. Առաջարկվում է քննարկվող հանցակազմում ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի վերաբերյալ տեղեկությունների հրապարակումը նախատեսել որպես հանցակազմը ծանրացնող հանգամանք՝ կապված հիշյալ տեղեկությունների հրապարակմամբ պատճառված անհամեմատ ավելի ծանր վնասի հետ:

7. Գաղտնիք կազմող տեղեկությունների՝ հատուկ սուբյեկտների կող-

մից ապօրինի մշակման այլ դեպքերի համար (հավաքել, պահել, օգտագործել) արդարացի քրեական պատասխանատվության նպատակից բխում է առանձին հանցակազմ նախատեսելու անհրաժեշտությունը:

8. Հրապարակում չի կարելի համարել տեղեկությունների այնպիսի փոխանցումը, որը թույլ չի տալիս նույնականացնել պացիենտին:

9. Առաջարկվում է գաղտնիքի հրապարակումը ներառել մասնավոր մեդադրանքի գործերի ցանկում, բացառությամբ եթե դա անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ:

10. Առաջարկվում է նախատեսել պետական լիցենզավորման կամ այլ եղանակով պետական վերահսկողության պահանջ ժողովրդական բժշկությանը զբաղվող անձանց և հոգեբանների համար՝ դրանով իսկ նրանց դարձնելով նախատեսվելիք նոր հանցակազմի սուբյեկտ:

13. Բժշկական գաղտնիքի հրապարակման իրավաչափության պայմանները պետք է հստակ սահմանվեն օրենքով: Ընդ որում, օրենքը չպետք է սահմանափակվի միայն հրապարակման նյութական հիմքը, ասել է թե՛ նպատակն ընդգծելով, այլ պետք է մանրամասնի այն պայմանները և չափորոշիչները, որոնց բացակայությունը հրապարակումը կդարձնի ոչ իրավաչափ անգամ օրինաչափ նպատակի առկայության պարագայում: Որպես նման օրինաչափ հիմքեր կարող են դիտվել չափահաս և գործունակ պացիենտի համաձայնությունը, անգործունակ կամ անչափահաս (իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ 16 տարեկան) անձի լավագույն շահը, սեփական կարծիքն արտահայտելու հնարավորությունից զրկված պացիենտի կյանքին կամ առողջությանը սպառնացող վտանգը, համաճարակի կամ վարակի կանխման, հանցագործությունը կանխելու կամ բացահայտելու նպատակը և աշխատանքում նշված մի քանի այլ օրինակներ: Օրենքով նախատեսված հատուկ դեպքերից դուրս հրապարակման իրավաչափությունը պետք է որոշվի ծայրահեղ անհրաժեշտության կանոններով: Ծայրահեղ անհրաժեշտության սահմանների անցումը գնահատելիս գլխավորը կանխված վտանգի և գաղտնիքի հրապարակմամբ պացիենտին և առողջապահական համակարգին պատճառված վնասի համաչափության ապահովումն է:

14. Քրեական նոր օրենսգրքի նախագծի համաձայն բժշկական գաղտնիքի ապօրինի հրապարակման համար իրավաբանական անձանց պատասխանատվությունը վրա կհասնի ոչ միայն դիտավորության, այլև անփոյթ վերաբերմունքի դեպքում:

15. Նպատակահարմար է նախատեսել կարգավորում, որի համաձայն

անչափահասների շրջանում թմրամոլությամբ և սեռավարակներով տառապելու դեպքերում նրանց բժշկական գաղտնիքի՝ ամբողջ ծավալով իրականացման իրավունքը (օրինական ներկայացուցիչներին չտեղեկացնելով բժշկական օգնություն տրամադրելը) կծագի 16 տարեկանից:

16. Արդարացված կլինի, եթե քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում բժշկական գաղտնիքի պաշտպանությունը համապատասխանեցվի բանկային և նոտարական գաղտնիքի պաշտպանությանը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Գոհար Հակոբյան, Բժշկական գաղտնիքի հրապարակման հանցակազմի սուբյեկտները // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2013 թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., 2014, էջ 220-236:

2. Գոհար Հակոբյան, Ծայրահեղ անհրաժեշտությունը բժշկական գաղտնիքի հրապարակման հանցակազմի համատեքստում // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2015 թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., 2016, էջ 476-494:

3. Գոհար Հակոբյան, Բժշկական գաղտնիքի բովանդակությունը բժշկական գաղտնիքը հրապարակելու հանցակազմի համատեքստում. ի՞նչն է ենթակա փոփոխության // Պետություն և իրավունք, N 1(71), Երևան, 2016, էջ 68-75:

4. Գոհար Հակոբյան, Բժշկական գաղտնիքը և ընտանեկան բռնությունը // Պետություն և իրավունք, N 2-3 (76-77), Երևան, 2017, էջ 32-41:

5. Գոհար Հակոբյան, Բժշկական գաղտնիքի հրապարակման իրավաչափության պայմանները իրավապահ մարմիններին տեղեկություններ տրամադրելու դեպքերում // Դատական իշխանություն, 9-10/219-220, Երևան, 2017, էջ 37-51:

6. Գոհար Հակոբյան, Բժշկական գաղտնիքի հրապարակման իրավաչափության հիմքերի և պայմանների օրենսդրական որոշ կարգավորումների շուրջ // Արդարադատություն, ղեկտեմբեր 6 (41), Երևան, 2017, էջ 73-77:

АКОПЯН ГОАР МЕХАКОВНА УГОЛОВНО-ПРАВОВАЯ ЗАЩИТА МЕДИЦИНСКОЙ ТАЙНЫ

Медицинская тайна является одним из основополагающих принципов в медицинской практике. Это позволяет пациентам быть открытыми и честными со своими врачами, делиться конфиденциальной информацией, позволяющей медицинскому персоналу обеспечивать эффективную диагностику и лечение. Из-за его важности для эффективного здравоохранения, медицинская тайна, являющаяся краеугольным камнем медицинской этики, со временем стала также юридическим требованием, ведущим к уголовному наказанию, если оно нарушается. Тем не менее, защита конфиденциальной медицинско́й информации становится всё более и более проблематичным в современном мире постоянно развивающихся информационных технологий, особенно в компьютеризированном хранении персональных данных. Несмотря на свое первостепенное значение для защиты прав на неприкосновенность частной жизни, а также общественного здравоохранения, эта тема не была должным образом изучена в армянской юридической науке, что способствовало неверному толкованию применимого законодательства. Более того, серьезные законодательные недостатки привели к отсутствию какой-либо судебной практики в отношении незаконного разглашения медицинской тайны. Эта ситуация привела к безнаказанности и недоверию к системе здравоохранения.

Данная диссертация посвящена всестороннему и тщательному анализу теоретических и практических вопросов в отношении уголовно-правовой защиты медицинской тайны.

Так, автор, изучая особенности и виды тайн, идентифицирует особенности медицинской тайны и определяет ее место среди охраняемых законом тайн. В частности, автор приходит к заключению, что медицинская тайна не является чистой формой профессиональной тайны, но может меняться в зависимости от статуса субъекта, который обязан ее хранить. После детального анализа концепции и характеристик медицинской тайны, автор предлагает ее законодательное определение.

Изучая исторический процесс становления и развития института медицинской тайны, автор определяет его элементы и анализирует каждый из них по отдельности. В частности, обсуждая содержание медицинской тайны, автор подчеркивает, что оно охватывает не только информацию, непосредственно связанную с состоянием здоровья пациента, но и любую личную информацию, которую выевают в ходе лечения.

Анализируя вопрос о разных границах защиты зависимо от статуса субъекта медицинской тайны, автор приходит к выводу, что стандарты

защиты могут действительно отличаться из-за разницы в «разумном ожидании приватности» разных субъектов.

Далее детально проанализированы соответствующие международно-правовые документы в сфере защиты медицинской тайны. Особое внимание уделяется Европейской конвенции о правах человека, которая остается самым важным и надежным инструментом защиты частной жизни среди документов Совета Европы.

Диссертация содержит всесторонний и детальный анализ состава преступления разглашения медицинской тайны в Уголовном кодексе Армении. В частности, автор поднимает множество вопросов, касающихся субъекта преступления. Из-за ряда законодательных пробелов не всегда можно точно определить, может ли какое-то лицо считаться таковым или нет. Поэтому автор предлагает соответствующие законодательные поправки, в том числе унифицировать все преступления, связанные с раскрытием профессиональной тайны в рамках одного состава преступления. Кроме того, автор обсуждает понятие «разглашение» и подчеркивает, что только раскрытие данных, которое может привести к прямой или косвенной идентификации пациента, может рассматриваться как разглашение.

Другим заслуживающим внимания вопросом, поднятым в диссертации, является отсутствие правовой определенности в отношении оснований и условий закономерного раскрытия медицинской тайны. Автор подчеркивает, что правовой пробел в этой области должен быть устранен, чтобы медицинский персонал и пациенты могли знать свои права и обязанности, а правоохранительные органы были способны эффективно среагировать. С этой целью автор предлагает список оснований и условий, которые, если они будут предписаны законом, могут служить критериями оценки закономерности разглашения информации.

Наконец, автор затрагивает некоторые процедурные аспекты раскрытия информации. В частности, в исследовании подробно рассматриваются условия закономерного разглашения конфиденциальных медицинских данных в контексте сотрудничества с правозащитными органами.

GOHAR HAKOBYAN
CRIMINAL LAW PROTECTION OF MEDICAL SECRECY

Medical secrecy is one of the most fundamental principles in medical practice. It allows patients to be open and honest with their physicians, to share sensitive information enabling the medical personnel to provide effective diagnosis and treatment. Due to its importance for productive healthcare, medical secrecy from being a cornerstone of medical ethics has now also become a legal requirement leading to criminal punishment, if violated. Nevertheless, the protection of confidential medical information is getting more and more challenging in the contemporary world of ever-developing information technologies, especially in computer storage of personal data. Despite its paramount importance for protection of privacy rights as well as public health, this topic has not been properly discussed within Armenian academia, which left the applicable legislation misinterpreted. Furthermore, serious legislative shortcomings resulted in the absence of any judicial practice regarding unlawful disclosure of medical secret. This situation has led to impunity and mistrust in the health care system. Hence, this dissertation is aimed at providing a comprehensive and thorough analysis of theoretical and practical issues with respect to the protection of medical secret in Criminal Law.

Thus, the author, examining the characteristics and types of secrets, identifies the features of medical secret and its place among secrets protected by law. In particular, the author suggests that the medical secret is not a pure form of professional secret, but it can transfer to another type of secret depending on the status of the person who is obliged to keep it. Upon detailed analysis of the concept and characteristics of medical secret, the author suggests its legislative definition.

Examining the historical background of the formation and development of the institute of medical secrecy, the author identifies its elements and separately analyzes each of them. In particular, referring to the content of medical secret, the author underlines that it covers not only the information directly related to the patient's health, but also any personal information that comes into doctor's knowledge in the course of medical treatment. Upon analyzing whether the boundaries of protection may vary depending on the status of the subject of medical secret, the author arrives with the conclusion that the scope of the protection may indeed differ due to the difference in "reasonable expectation of privacy".

Further, the relevant international legal instruments for medical secrecy protection are analyzed in detail. A special focus is put on European Convention

on Human Rights which remains the most significant and reliable instrument for privacy protection within Council of Europe framework.

The dissertation provides for a comprehensive and detailed analysis of *corpus delicti* of medical secrecy disclosure in the Armenian Criminal Code. In particular, the author raises numerous issues regarding the subject of the crime. Due to a number of legislative gaps, it is not always possible to precisely identify whether a certain person can be deemed as such or not. Therefore, the author suggests relevant legislative amendments, including that of unifying all crimes concerning professional secrecy disclosure under one umbrella. In addition, the author discusses the notion of "disclosure" and highlights that only a divulgence that may lead to a direct or indirect identification of the patient can be considered as disclosure.

Another noteworthy issue raised in the dissertation is lack of legal certainty with respect to the grounds and conditions of lawful disclosure of medical secret. The author emphasizes that the legal gap in this field must be eliminated so that the medical personnel and patients can be aware of their rights and duties, and the law-enforcement is able to adequately react. To that end, the author suggests a list of grounds and conditions that, when legally prescribed, can serve as criteria for assessment of lawfulness of disclosure.

Finally, the author elaborates on the conditions of lawful disclosure of confidential medical data in the context of cooperation with the law-enforcement bodies.